

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ անվան Լեզվի Ինստիտուտ

Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Յ Ա Ն Հ Ա Ս Մ Ի Կ Ռ Ա Ձ Մ Ի Կ Ի

ՎԱՆԿԸ ՈՐՊԵՍ ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

**Ժ. 02. 02 – «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝
Լ. Ս. ՀՈՎՍԵԹՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝
Ս. Ա. ՎԱԼՍՏՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝
Ռ. Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. ապրիլի 23-ին՝ ժամը 14.00-ին,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող
ԲՈՅ-ի 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0005, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մարտի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկայացվող ուսումնասիրությունը հիմնված է լեզվի չափական աստիճանակարգության մաս կազմող վանկ-բաղադրիչի, նրա կառուցվածքի, հնչույթաբանական դերի և հայերենում վանկատման սկզբունքների որոշակի առանձնահատկությունների տեսական վերլուծության վրա:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Հայ լեզվաբանական գրականության մեջ լեզվաբանական տարբեր մակարդակներ ընդգրկող հարուստ ու բազմաձևավալ ուսումնասիրություններում բավականին փոքր մաս է կազմում հնչույթաբանության ու այս ոլորտում գործող միավորների, բաղադրիչների, դրանց միջոցով սահմանվող լեզվական երևույթների ու գործընթացների վերլուծությունը: Թե՛ ավանդական և թե՛ ժամանակակից ուսումնասիրություններն ընդհանուր առմամբ մեկնաբանվում են սահմանողական կամ նկարագրական ավանդույթների շրջանակներում: Հարկ է նշել սակայն, որ համաշխարհային լեզվաբանության մեջ շուրջ կես դար է, ինչ վերոհիշյալ մեթոդներն այլևս արդիական չեն: Այսօր լեզվաբանության մեջ առավել կարևոր և հեռանկարային են համարվում ոչ թե լեզուների *նկարագրությունը* ու լեզվական փաստերի արձանագրությունը, այլ ստացված փաստերի սկզբունքային ու մանրակրկիտ վերլուծությունն ու *բացատրությունը*: Հայերենի վանկի հնչույթաբանական վերլուծությունը լեզվի տեսության արդի մեթոդներով կարելի է ոչ միայն նյութի բացը լրացնելու, այլև համաշխարհային լեզվաբանության մեջ ներկայումս լայնորեն կիրառվող դրույթները հայերենի հնչույթաբանական վերլուծության մեջ ներմուծելու առումով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է ներկայացնել վանկի տեսության ներկայիս հիմնական դրույթները, ապա դրանց հիման վրա կատարել հայերենի վանկի հնարավորինս ընդգրկուն վերլուծություն: Աշխատանքի հիմքում դրված են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ժամանակակից ճանաչողական լեզվաբանության մեջ առկա և սույն ուսումնասիրության հետ առնչվող տեսական վերլուծության հիմնական միտումները, հիմնավորել լեզվաբանությունը որպես բնական գիտություն ուսումնասիրելու առավելություններն ու հեռանկարները:

- ընդգծել լեզվաբանության տեսության մեջ *վանկը որպես հնչույթաբանական բաղադրիչ* ներառելու կարևորությունը և, հետևաբար, նրա կառուցվածքային տարրերի մանրակրկիտ վերլուծության անհրաժեշտությունը:

- համապատասխան վերլուծության միջոցով հիմնավորել, որ հայերենում մի շարք հնչույթաբանական-ձևաբանական գործընթացների քննարկման համար վանկը կարող է ամենահարմար տիրույթը համարվել, իսկ աշխատանքում վեր հանված լեզվաբանական երևույթները՝ լավագույնս սահմանվել վանկային կառուցվածքի միջոցով:

- սահմանել ու ներկայացնել հայերենի վանկի ներքին կառուցվածքը, հայերենում վանկաբաժանման մեխանիզմների ալգորիթմն ու նրա գործողության առանձնահատկությունները, նկատի առնելով նաև խոսքի *ընկալման* գործընթացներում վանկի կարևորության խնդիրը:

- վանկի հնչույթաբանական-ձևաբանական կարևորությունը քննարկել վանկի և հայերենի քերականության մեջ բազմիցս քննարկված *գաղտնավանկային ը-ի* հարաբերությամբ:

- հիմնվելով սույն աշխատանքի համար կատարված վանկաբաժանման երկու փորձերի արդյունքների վրա, զուգահեռներ տանել հայերենին բնորոշ վանկաբաժանման փաստերի և *համընդհանուր քերականության* կանխատեսումների միջև:

- ներկայացնել «ծտի լեզու» կոչվող գաղտնալեզվի հնչույթաբանական վերլուծությունը և ցույց տալ, որ հայերենում նման վերլուծությունը յուրահատուկ ու արդյունավետ միջոց է հաղորդակից լինելու *բնիկ հայախոսների լեզվական բնագոյների*, ինչպես նաև հայտնաբերելու գաղտնալեզվով խոսողների «անգիտակցական տեղյակությունը» ընկալման գործընթացներին ու այն հնտորեն կիրառելու նրանց բացառիկ կարողությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ ներկայացվում է հնչույթաբանական վերլուծություն՝ **ինքնահատույթային** (autosegmental) **տեսության** շրջանակներում: Փորձ է արվում *ոչ զծային սկըզբունքների ու մեթոդների կիրառումով* և արդեն իսկ հայտնի բազմաթիվ նկարագրական փաստերի օգնությամբ տեսականորեն հիմնավորել, *բացատրել*, թե

ինչպիսի լեզվաբանական և, մասնավորապես, հնչյութաբանական գործընթացներով, սկզբունքներով ու կանոններով են պայմանավորված նկարագրվող լեզվական իրողությունները կամ «պարտադրվող» ուղղագրական-ուղղախոսական կանոնները: Նորույթ է նաև այն դրույթը, որ հայերենում (ինչպես աշխարհի շատ լեզուներում) **վանկերը կարող են գոյություն ունենալ բառերից անկախ**: Այս իրողության վրա հիմնվելով, աշխատության մեջ առաջին անգամ սահմանվում ու առաջադրվում է հայերենում **հնչյութաբանական վանկի** կառուցվածքը:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Աշխատանքում հայերենի վանկը, նրա բաղադրիչներն ու վանկերի հետ առնչվող ձևաբանական/հնչյութաբանական որոշակի երևույթներ քննարկվում են բացառապես **ոչ գծային** մեթոդներով: Ի տարբերություն **գծային** տեսության, որտեղ հատույթի թե՛ որակական և թե՛ հարաբերական հատկությունները ներկայացվում են հատկանիշների միջոցով, **ոչ գծային կամ ինքնահատույթային** տեսության մեջ հատույթների **որակական** հատկություններն արտահայտվում են **հատկանիշների**, իսկ **հարաբերական** հատկությունները՝ **աստիճանակարգական (հիերարխիական) կառուցվածքի** միջոցով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը կարող է նպաստել հայերենի հնչյութաբանության մեջ նոր՝ ինքնահատույթային տեսության ներմուծմանն ու վերլուծության ոչ գծային մեթոդի կիրառմանը: Այդպիսով հնարավորություն կստեղծվի հայերենում լեզվական այս կամ այն երևույթի, գործընթացի վերլուծությունը զարգացնել այլ լեզուներից ստացված լեզվաբանական տվյալների, գործուն տեսական դրույթների, մեթոդաբանության, ինչպես նաև հետազոտությունների արդյունքում քննություն բռնած գիտական մոտեցումների ու սկզբունքների վրա: Հայերենում չափական վանկի հետագա **ինքնահատույթային** վերլուծությունը կարող է տեսականորեն կարևոր նյութ տրամադրել նաև վանկի վրա հիմնված ժամանակակից համալեզվական ուսումնասիրությունների: Գործնական տեսակետից, ոչ գծային տեսության դրույթների ներմուծումը կարող է օգտակար լինել ոչ միայն լեզվի տեսությամբ զբաղվող գիտնականների, այլև ցանկացած լեզվով հատուկ դասընթացներ վարող, դպրոցական/բուհական դասագրքեր, բառարաններ, ուսումնական ձեռնարկներ գրող և/կամ կազմող մասնագետների համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, ուսումնասիրության շրջանակներում կատարված երկու փորձերի օրինակներն ու նրանց համապատասխան հնչյունաբանական (IPA) արտահայտություններն ամփոփող հավելվածներից, աշխատանքում տեղ գտած լեզվաբանական հասկացությունների ու նշանների բառարանից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ թեմայի ընտրության հակիրճ հիմնավորման հետ ներկայացվում է աշխատանքում ամփոփված գլուխների հիմնական բովանդակությունը:

ԳԼՈՒԽ 1. ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՆԿԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱՐՈՒՅ

Առաջին գլխում ընդհանուր գծերով ներկայացվում են ժամանակակից լեզվաբանական գիտակարգերում առկա տեսական վերլուծության ելակետային մոտեցումները, քննարկվում են լեզվաբանությունը բնական գիտությունների համակարգում ուսումնասիրելու նպատակահարմարությունն ու դրա շնորհիվ ընձեռվող հնարավորությունները:

Անցած դարի կեսերից լեզվաբանության մեջ ծնունդ է առել և հաջողությամբ զարգանում է մի մեթոդաբանություն, ըստ որի՝ լեզվական երևույթները դիտվում են որպես *համընդհանուր քերականության (ՀՔ)* սկզբունքներից բխող, սահմանափակ թվով և որոշակի պարամետրերով պայմանավորված իրողություններ: Այն, ինչը նախկինում (իսկ հայ լեզվաբանության նկարագրական-սահմանողական դրույթներում ներկայումս էլ) բնութագրվում էր որպես տվյալ լեզվի առանձնահատկություններից բխող քերականական կանոն, այժմ, շնորհիվ համաշխարհային լեզվաբանության մեջ արձանագրված տեսական և փորձառական լայնածավալ ուսումնասիրությունների ու հարուստ գիտական փորձի, համարվում է մեկն այն որոշակի թվով կանոններից, որոնք լեզվական համակարգին են տրվում *համընդհանուր քերականության* կողմից: Աշխատանքում հատկապես կարևորվում է այլևս բազմակողմամիորեն ապացուցված այն փաստը, որ մարդու լեզվական բընագրի էական մաս է կազմում համընդհանուր, համալեզվական որոշակի հատ-

կանիշներով սահմանվող քերականական սկզբունքների ու պարամետրերի մի համակարգ, որն ակնհայտորեն մեծ դեր է կատարում անհատի լեզվական վարքագծի ձևավորման մեջ: Հայերեն խոսող ցանկացած մարդ՝ անկախ տարիքից ու ստացած կրթությունից, կարող է միանգամից նկատել, որ «Անթերի նրա էր կատարունը» նախադասությունը սխալ է, «հայերեն չէ» (ի տարբերություն «Անթերի էր նրա կատարունը» նախադասության): Եվ եթե որոշ մարդկանց նման եզրակացությունը կարելի է վերագրել հայոց լեզվից նրանց ունեցած բավարար քերականական գիտելիքին, ապա դժվար թե նախադպրոցական տարիքի երեխաների կամ ինչ-ինչ պատճառներով քերականության դասագիրք անգամ չբացած չափահասների ճիշտ նույն գնահատականը վերը նշված նախադասության վերաբերյալ որևէ կերպ հնարավոր լինի պայմանավորել լեզվի դասագրքային քերականության իմացությամբ: Ավելին, երկրորդ խմբին պատկանող մարդիկ ոչ միայն ի վիճակի են ուղղել անընդունելի շարահասությամբ իրենց ներկայացվող նախադասությունները, այլև հաջողությամբ կազմում են հնարավոր ամենատարբեր բարդության շարահյուսական կառույցներ՝ առանց նախնական (ուսուցանվող) քերականական գիտելիքների: Ժամանակակից լեզվաբանական տեսությունների համաձայն՝ մարդու մտային լեզվական համակարգը պարզապես «տեսնում է» առաջարկվող շարահասական կառուցվածքի և որոշակի *ներակա* սկզբունքներով սահմանվող քերականական կաղապարի անհամապատասխանությունը:

Մարդու բնածին և ձեռքբերովի մտավոր կարողություններն ու դրանցով պայմանավորված գործընթացներն ուսումնասիրող առանձին գիտությունների (կենսաբանություն, հոգեբանություն, նյարդաբանություն, ֆիզիոլոգիա, բժշկագիտության տարբեր ճյուղեր, մարդաբանություն, լեզվաբանություն և այլն), ապա դրանց համատեղ խոր ուսումնասիրությունների հիման վրա կառուցված տեսությունները բնական գիտությունների բնագավառում զգալի նվաճումներ են արձանագրել: Այս համատեքստում լեզվաբանությունը, որպես կենսական գիտություն, վերահաստատել է իր տեղը բնական գիտակարգերի շարքում: Ամենևին էլ չնսեմացնելով այս գիտության դերը հասարակագիտության համակարգում՝ պարզապես անհնար է չտեսնել այն հեռանկարները, որ բացվում են լեզվաբա-

նության առջև, երբ այն դիտվում է մարդու՝ որպես կենսաբանական էակի խոսքի ու ճանաչողության էվոլյուցիոն զարգացումների համատեքստում¹: «Յուրահամար» լեզվաբանությունը երբեք չի կարող սպառնիչ կամ հիմնավոր բացատրություն տալ, ասենք՝ երեխայի լեզվայուրացման (սկզբում մայրենիի, ապա նաև որևէ օտար լեզվի կամ լեզուների) բարդ գործընթացներին, որոնց հիմքում ընկած են կենսաբանական, նյարդաբանական, ֆիզիկական, հոգեբանական, ինչպես նաև մի շարք այլ գործոններ:

Այս գլխում ընդգծվում է նաև լեզվաբանության տեսության մեջ *վանկը որպես հնչույթաբանական բաղադրիչ* ներառելու կարևորությունը և, հետևաբար, նրա կառուցվածքային տարրերի մանրակրկիտ վերլուծության անհրաժեշտությունը:

Ժամանակակից լեզվաբանական գիտությունների մեջ մի շարք գիտաճյուղեր զբաղվում են և՛ առողջ, և՛ որոշակի ֆիզիկական ու մտավոր արատներ ունեցող մանուկների կողմից *լեզվի յուրացման* օրինաչափությունների, առանձնահատկությունների հետազոտությամբ ու վերլուծությամբ: Երկար տարիների ընթացքում կուտակված խորագծին ու բազմաբնույթ ուսումնասիրությունների արդյունք և այլևս ապացուցված իրողություն է այն, որ.

- առողջ մանուկներն իրենց մայրենի լեզվի հիմքը կազմող բառապաշարի, ինչպես նաև հնչույթաբանության և շարահյուսության հիմնական մասը յուրացնում են մեկուկեսից չորս տարեկան հասակում²:
- չափափասների խոսքի «աղճատումներն» ու «կրճատումները» աշխարհի ամենատարբեր լեզուներով խոսող մանուկների կողմից ունեն զարմանալիորեն

¹Տե՛ս **Smith, N. V.** (2003) Dissociation and modularity: Reflections on language and mind. In: **Banich M. & M. Mack** (ed.) *Mind, Brain and Language* Lawrence Erlbaum, pp. 87-111; **Chomsky, N.** (2000) *New Horizons in the Study of Language and Mind*, Cambridge: Cambridge University Press; **Fitch, W. T., Hauser, M. & N. Chomsky** (2005) *The Evolution of the Language Faculty: Clarifications and Implications*. *Cognition* 97:179-210; **Hauser, M., Chomsky, N. & W. T. Fitch** (2002) *The Faculty of Language: What is it, who has it, and how did it evolve?* *Science* 298:1569-1579; **Carston, R.** (1996) The architecture of the mind: modularity and modularization. In **Green, D.** et al. (eds.) *Cognitive Science: An Introduction*. Blackwell, 53-83; **Anderson, S. & D. Lightfoot** (2002) *The Language Organ: Linguistics as Cognitive Physiology*. Cambridge, CUP; **Pinker, S. & R. Jackendoff** (2005) The faculty of language: What's special about it? *Cognition* 95: 201-236 և այլն:

²Տե՛ս **Guasti, M. Teresa** (2004) *Language Acquisition: The Growth of Grammar*, Cambridge, Massachusetts, MIT press:

ընդհանուր և կանոնավոր հիմքեր և ենթարկվում են, այսպես կոչված՝ «չգրված ու անգիտակցական օրենքների»³:

- Լեզվի յուրացման յուրաքանչյուր փուլում, անկախ մայրենիի տիպաբանությունից ու լեզվահատկանշական սկզբունքներից, երեխաները դրսևորում են որոշակի, բավականին կանխատեսելի և օրինաչափ լեզվական վարքագիծ⁴:

Լեզվի յուրացման վերաբերյալ հետազոտություններն ու արձանագրված փաստերը հարուստ նյութ են տրամադրում նաև վանկի տեսությամբ զբաղվող գիտնականներին:

Ատենախոսության առաջին գլխում հատուկ ուշադրության է արժանանում այն փաստը, որ լեզվական արտահայտության մեջ *բառերի* ու *վանկերի սահմանները* ոչ միշտ են համընկնում, և, հետևաբար, կարևորվում է *բառերից անկախ վանկային վերլուծությունը*:

Հայ լեզվաբանների ուսումնասիրություններում⁵ բառի և վանկի միջև հստակ տարբերակում կամ որոշակի սահմանագիծ ինչ-ինչ պատճառներով չի դրվում, հետևաբար՝ վանկասկիզբը սովորաբար նույնանում է բառասկզբի, վանկավերջն էլ՝ բառավերջի հետ: Այսպիսի մոտեցման դեպքում վանկի կառուցվածքային հետազա վերլուծությունը փակուղու առաջ է հայտնվում: Վանկերի ու բառերի սահմանները նույնացնող տեսաբանների էական բացթողումը թերևս այն է, որ նրանք չեն «նկատում» մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ *վանկերը կարող են գոյություն ունենալ բառերից անկախ*, իսկ լեզվական որոշ երևույթներ ու որոշակի լեզվաբանական գործընթացներ կարող են գործել բացառապես *վանկի տիրույթներում*: Սույն ուսումնասիրության մեջ բառերում (կամ ձևույթներում) հատույթային շարքերի ու վանկի կառուցվածքային բաղադրիչների հարաբերությունները

³ Տե՛ս **Roca, I. & W. Johnson** (1999) *A course in phonology*, UK, Cornwall, Blackwell Publishing, p. 237:

⁴ Տե՛ս **Pinker, S.** (1994) *The Language Instinct*, Harper Collins, New York; **Pinker, S.** (2007) *The Stuff of Thought* Allen Lane, Penguin Books:

⁵ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, *ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, **Մարգարյան Ա.**, *ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1997, **Ղարազյուլյան Թ.**, Հայերենի գաղտնավանկային ը-ի հնչման հիմնական առանձնահատկությունները, *Լրաբեր* 12, Երևան 1979, էջ 35-45, **Խաչատրյան Ա.**, *ժամանակակից հայերենի հնչույթաբանություն*, Երևան, 1988, **Աղայան Է.**, *Լեզվաբանության հիմունքներ*, Երևան, 1987 և այլն:

քննարկվում են **վանկակենտրոն** վերլուծության սկզբունքներով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԵՐԵՆԻ ՎԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Երկրորդ գլխում քննության է առնվում հայերենի վանկային կառուցվածքը: Վանկի ընդհանուր կառուցվածքը մեկնաբանվում է լեզվում վանկային ու բառային (ձևույթային) կառուցվածքների հարաբերությամբ:

Հայերենում, ինչպես շատ այլ լեզուներում, վանկն ունի ներքին աստիճանակարգական կառուցվածք: Այս դրույթը կարելի է հիմնավորել մի շարք՝ արդեն իսկ վավերացված լեզվաբանական գործընթացների բնույթով. վանկասկզբի, վանկամիջի և վանկավերջի դիրքերում հնչույթաբանական հատույթների (կամ հատույթային կապակցությունների) տրոհական վարքագծով, շեշտադրությամբ, կոկորդային առնմանությամբ, շնչեղացմամբ և այլն, որոնք համգամանորեն բացատրվում են միայն վանկային կառուցվածքի, վանկի անմիջական բաղադրիչների ու ենթաբաղադրիչների վկայակոչությամբ: Այս գլխում փորձ է արվում հիմնավորել սույն ուսումնասիրությամբ առաջադրվող հայերենի բուն վանկային կառուցվածքի վավերականությունը, որի համաձայն՝ վանկային կաղապարը հայերենում ունի հետևյալ պատկերը.

(1) $[X \begin{smallmatrix} 1 \\ 0 \end{smallmatrix}]$ վանկասկիզբ $[x^1]$ միջուկ $[X \begin{smallmatrix} 1 \\ 0 \end{smallmatrix}]$ վանկավերջ


Ավանդական լեզվաբանական աշխատությունների, դասագրքերի մեջ մանրամասնորեն նկարագրված են բառերի, ինչպես նաև վանկերի մեջ բաղաձայնների ու ձայնավորների որոշակի դիրքեր զբաղեցնելու առանձնահատկությունները (բառավերջի/վանկավերջի բաղաձայնական խմբեր, ձայնավորական հորանջ, բաց և փակ վանկեր, *բառասկզբի օրենք* և այլն): Սույն աշխատության մեջ փորձ է արվում արդեն իսկ առկա բազմաթիվ նկարագրական փաստերի կիրառությամբ տեսականորեն հիմնավորել, բացատրել, թե ինչպիսի լեզվաբանական և, մասնավորապես, հնչույթաբանական գործընթացներով, սկզբունքներով ու կանոններով են պայմանավորված նկարագրվող լեզվական իրողությունները:

Աշխատանքում առաջարկվող՝ վերը նշված վանկային կաղապարը ցույց է տալիս, որ հնչույթաբանորեն լավ կազմված **վանկասկիզբը** հայերենում համապատասխանում է բառասկզբի եզակի բաղաձայնի: Վանկասկզբի բաղաձայն+ բաղա-

ծայն կապակցությունները ([CC-]) հայերենում անթույլատրելի են: Հայերենում հատուկ նոտեցում է պահանջում C_1C_2 կապակցությունը, որտեղ $C_2=J$ (միջանկյալ հնչյուն՝ սահուն): Այս կաղապարը (CJ) գաղտնավանկային ը-ի գետեղման խնդիր չի առաջացնում: **C+J** կապակցությունները հայերենում կարող են դիտվել որպես քնայնացված մենահատույթներ՝ **C'**:

Նկատի առնելով *պարտադիր վանկասկզբի սկզբունքը*, ձևույթների և բառերի վերջադիր բաղաձայնները հայերենում, ինչպես և *համընդհանուր քերականության* վանկատման տեսության մեջ, վանկաբաժանման մեջ չեն ընդգրկվում. պատճառը՝ վերջիններիս ձայնավորակիզը որևէ ձևությամբ հաջորդելու դեպքում հնչյութաբանական լրացուցիչ գործողությունից՝ *վերավանկատումից խուսափելը* է: Նկատենք, որ հայերենը ձգտում է բաց՝ CV վանկերի կազմության⁶: Այսպիսով, հաշվի առնելով հայերենի վանկային կառուցվածքի որոշ առանձնահատկություններ, ինչպես նաև հիմք ընդունելով *պարտադիր վանկասկզբի սկզբունքն ու համընդհանուր քերականության* վանկակազմության մեխանիզմները, հայերենում ձեվույթի (բառի) վերջադիր բաղաձայնը կարելի է դիտել որպես վանկասկիզ:

(4) . C (վանկասկիզը)] ԿԱ.Վ, ԼԻ.Ծ, ՈՒ.Թ



Հայերենում ձևույթավերջի կամ բառավերջի դիրքերում CC խմբերն ակնհայտորեն կազմում են վանկավերջ-վանկասկիզը կաղապարներ:

(5) C (վանկավերջ). C (վանկասկիզը)] ՀԱՐ. Թ, ԴԵՂ. Զ, ՎԱՆ.Կ



Ձևույթի վերջադիր բաղաձայնը, մինչև պարբերական (ցիկլային) վանկատման որոշակի պահ (տես վերը բերված (4ա ii) և (5ա ii)), մնում է չվանկատված: Այն հնչյութաբանական տեսության մեջ ստացել է «*թերի, կիսատ վանկասկիզը*» որա-

⁶ Տես Մարգարյան Ա., *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1997, էջ 118:
⁷ Վանկային կաղապարներն այսուհետև կներկայացվեն հնչյութաբանական գրականության մեջ ընդունված Onset (O)=վանկասկիզը, Nucleus (N)=միջուկ և Coda(C)= վանկավերջ նշաններով:

կումը⁸: Առանց լրացուցիչ վերավանկատման անհրաժեշտության, վերջինս լիարժեք վանկասկզբ է դառնում հաջորդող պարբերության միջուկի համար: Կարելի է ենթադրել, որ այս, այսպես կոչված, «արտավանկային (կամ արտաչափական) սկզբունքն» ընկած է հայերենի վանկաբաժանման հիմքում: Բոլոր լեզուներում ընդհանրապես⁹, իսկ հայերենում՝ մասնավորապես, վանկավերջ-վանկասկզբի վերլուծությամբ է պայմանավորվում լեզվի վանկային կառուցվածքի բնույթը:

Վանկի **միջուկային** մասը սահմանափակվում է ճիշտ մեկ դիրքային միավորով: Հայերենում բառի աջ եզրը, այսինքն՝ միջուկն ու նրան հաջորդող բաղաձայնը (VC) կամ բաղաձայնական խումբը (VCC)՝ **հանգը**, պահանջում է մանրամասն քննություն: *Ձևայինների ներսում* կարելի է առանձնացնել միջանկյալ հանգերի, *թթև* (բաց) և *ծանր* (փակ) տեսակները (V. և VC., համապատասխանաբար):

Օրինակ՝ **թթև** (բաց) V. → **ա.վազ, բե.րան, հո.գի, ու.րախ** և այլն:
ծանր (փակ) VC. → **ար.ծիվ, մատ.նոց, ամ.րոց, այ.րի**¹⁰ և այլն:

Ձևայինների *վերջադիր հանգերում* կարող են արձանագրվել ինչպես .VC], այնպես էլ .VCC] կաղապարներ, օրինակ՝

Օրինակ՝ VC] → **կոր, բալ, մուգ** և այլն:
 VCC] → **հասկ, բարդ, գանձ** և այլն:

VCCC] կաղապարը, որի մասին նշվում է «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ¹¹, հայերենին ամենևին էլ բնորոշ չեն: Դրանք սովորաբար փոխառություններ կամ օտարալեզու բառեր են (տեքստ, Մարքս, Կուրսկ, Հայրեն և այլն), կամ էլ բնիկ բառեր, որոնց հիմքերը որպես մենաձևային են ընկալվում, մինչդեռ իրականում դրանք ներկայացնում են երկու ձևայինների

⁸ Տե՛ս Harris, J. (1994) *English Sound Structure*. Oxford: Blackwell, p.74:
⁹ Տե՛ս Harris, J. & E. Gussmann (2002) Word-final onsets. *UCL Working Papers in Linguistics* 14:
¹⁰ Ծայնավոր+ասիում (յ) կապակցությունը հայերենում երբևէ երկձայն չի կազմում: Ժամանակակից հայերենում, ի տարբերություն դասական հայերենի՝ զրաբարի, երկձայն կամ երկբարբառ հնչյուններ չկան (տե՛ս Գ. Աճառյան *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Հնչյունաբանություն, Երևան, 1971, էջ148-152, Ա. Սարգսյան նշվ. աշխ., էջ 68; Ռ. Թոխմախյան *Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը*, Երևան, 1983, էջ 33), հետևաբար, հանգի Vյ կապակցությունը դիտվում է որպես միջուկ-վանկավերջ (nucleus-coda) հարաբերություն:
¹¹ Տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 88:

միասնությունն. օրինակ՝ **անգք**, **վարձք**, **կուրծք** և այլն (վերջադիր **ք**-ն պատմականորեն հոգնակիակերտ ձևույթ է): Այսպիսով, ներծնույթային *վերջադիր հանգի* ընդհանուր կաղապարը կազմված է առավելագույնը *երկու* բաղաձայնից:

Հայերենում հնչույթաբանորեն լավ կազմված **վանկավերջը** համապատասխանում է բառավերջի եզակի բաղաձայնի: Հայոց լեզվի մակերեսային կառուցվածքներում պարզ վանկավերջ կարող է կազմել ցանկացած բաղաձայն: Ցանկացած VCCV միջավայրում արմատին պատկանող CC կապակցությունները գրավում են տարավանկ դիրքեր և հետևողականորեն վանկատվում են որպես VC.CV՝ անկախ քննարկման առարկա բաղաձայնների հատկանիշային բնութագրից: Եվ՝ -C.C- և՝ -CC] միջավայրերում բաղաձայնները գտնվում են վանկավերջ-վանկասկիզբ հարաբերության մեջ¹²: Ի պաշտպանություն այս տեսակետի՝ ստորև ներկայացվում են -CC] կապակցությունների մի շարք օրինակներ, որոնք ցուցաբերում են նույն տրոհական հատկանիշները, ինչ որ նրանց -C.C- կրկնորդները.

(9) ՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐՋԱՂՎՈՐ - CC] ԵՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ -C.C- ԿԱՊԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՅԹԱԿԱՆ - ՊԱՅԹԱԿԱՆ		ՇՓԱԿԱՆ - ՊԱՅԹԱԿԱՆ	
<i>ՎԵՐՋԱՂՎՈՐ</i>	<i>ՄԻՋԱՆԿՅԱԼ</i>	<i>ՎԵՐՋԱՂՎՈՐ</i>	<i>ՄԻՋԱՆԿՅԱԼ</i>
միտք	ոտ.քի	անհաղթ	մաղ.թել
ցատկ	պատ.կեր	դաշտ	պաշ.տել
տակտ	ակ.տիվ	փաստ	նապաս.տակ
ՉԱՅՆՈՐԴ - ՊԱՅԹԱԿԱՆ		ՉԱՅՆՈՐԴ - ՇՓԱԿԱՆ	
<i>ՎԵՐՋԱՂՎՈՐ</i>	<i>ՄԻՋԱՆԿՅԱԼ</i>	<i>ՎԵՐՋԱՂՎՈՐ</i>	<i>ՄԻՋԱՆԿՅԱԼ</i>
վարկ	եր.կու	գորշ	ար.շավ
հայտ	կայ.տառ	ընկույզ	հույ.գեր
խումբ	ամ.բար	վարժ	շար.ժում
ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆ - ՊԱՅԹԱԿԱՆ		ՉԱՅՆՈՐԴ - ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆ	
<i>ՎԵՐՋԱՂՎՈՐ</i>	<i>ՄԻՋԱՆԿՅԱԼ</i>	<i>ՎԵՐՋԱՂՎՈՐ</i>	<i>ՄԻՋԱՆԿՅԱԼ</i>
ծածկ	կոծ.կել	լուրջ	ար.ջուկ
մեջք	քաջ.քեր	տանձ	ան.ձավ
խմիչք	աչ.քաբաց	ճանճ	կն.ճիթ

Վերջահար և միջանկյալ բաղաձայնական կապակցությունների միջև անցկացվող ֆոնոտակտիկական զուգահեռները վկայում են այն մասին, որ վերոհիշյալ

¹² Տե՛ս **Harris, J. (1997)** Licensing Inheritance: an integrated theory of neutralisation. *Phonology* 14, p. 326:

կապակցությունները, անկախ բառի մեջ գրաված դիրքից, ենթարկվում են վանկատման միևնույն սկզբունքին:

ՊԼՈՒԽ 3. ՎԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Երրորդ գլխում վանկի հնչույթաբանական-ձևաբանական արժեքը կարևորվում է հնչույթաբանական քերականության մեջ բազմիցս քննարկված գաղտնավանկային ը-ի առնչությամբ: Աշխատության այս բաժինը ներկայացնում է նաև հայերենում վանկաբաժանման մեխանիզմների ալգորիթմն ու նրա գործողության առանձնահատկությունները: Ուշադրության է առնվում նաև *ընկալման* գործընթացներում վանկի կարևորության խնդիրը:

Աշխատանքում, հաշվի առնելով ներկայումս հնչույթաբանական տեսության մեջ ընդունված հատույթի հնչույթային արժեքը սահմանող մոտեցումները, ը-ի կարգավիճակի վերաբերյալ առաջադրվում է հետևյալ վարկածը. ը հնչյունը մյուս ձայնավորական հատույթների հետ ազատ փոփոխակային հարաբերության մեջ է գտնվում: *Ը-ն հայերենի հնչույթային կազմի խորքային հատույթ չէ:*

Չայնավորական հենարանի գետեղումը վանկատման հետ առնչվող թերևս ամենաբարդ հնչույթաբանական գործընթացն է հայերենում: Գաղտնավանկային ը-ի գործելու մեխանիզմները հայերենում բավականին բարդ են թվում և, թերևս, զարմանալի չէ, որ վերջինիս դիրքը անկանխատեսելի է համարվել մինչև այժմ:

Բ. Վոքսը, հիմք ընդունելով Ֆ. Դելի և Ս. Էլմեդլաուի¹³ կողմից մշակված (ՅՔ բաղադրիչ մաս հանդիսացող) վանկատման ալգորիթմի¹⁴ վերափոխված տարբերակը, առաջարկում է հետևյալ ընդհանուր մեխանիզմը, որտեղ ը-ի գետեղումը

¹³ **Dell, F. & M. Elmedlaoui** (1985) Syllabic consonants and syllabification in Imdlawn Tashlhiyt Berber. *Journal of African Languages and Linguistics* 7, 105–130.

¹⁴ Տեսական լեզվաբանության մեջ վանկատման տարբեր ալգորիթմներ են առաջարկվել (տե՛ս **Clements, G. N. & S. J. Keyser** (1983) *CV Phonology: A Generative Theory of the Syllable* Cambridge, Mass.: MIT Press **Steriade, D.** (1982) *Greek Prosodies and the Nature of Syllabification* Ph.D. diss., MIT, Cambridge, Mass., (1984) Glides and vowels in Romanian. *Proceedings of the 10th Meeting of the Berkeley Linguistic Society Department of Linguistics* University of California, Berkeley; **Vergnaud, J.-R. & M. Halle** (1979) *Metrical structure in phonology*. MIT Cambridge.

Mass.; **Kenstowicz, M., Bader Y. & R. Benkeddache** (1982) *The phonology of state in Kabyle Berber*. University of Illinois, Champaign; **Guerssel, M.** (1983) *Glides in Berber and Syllabicity*. MIT Cambridge, Mass.):

կարևոր մաս է կազմում.

Ա. Կցում Մեխանիզմը գործում է աջից ձախ ուղղությամբ ($U \rightarrow Q$):

i. Վանկի միջուկը նշանակել X -ով ($X =$ որոշակի հնչեղությամբ չվանկատված հատույթ),

ii. Ամնիջապես նախորդող հատույթային կապակցությունը կցել որպես վանկասկիզբ (կամ հավելված-վանկասկիզբ կապակցություն),

iii. Ամնիջապես հաջորդող հատույթային կապակցությունը կցել որպես վանկավերջ (կամ վանկավերջ-հավելված կապակցություն):

Բ. Ը-ի գետեղում

iv. Միջուկային բաղաձայնին կից գետեղել ձայնավորական արմատահանգույց (Root Node)՝ հետևյալ սկզբունքների համաձայն.

ա) աջ կողմում, եթե վանկում չկա սկզբնաբաղաձայն կամ եթե վանկում առկա է հանգի այնպիսի կապակցություն, որը չի կարող կազմել բարդ վանկավերջ,

բ) մնացած դեպքերում՝ ձախ կողմում:

Գ. Վանկի վերաբաժանում

v. Վերավանկատել այն վանկերը, որոնցում միջուկի դիրքը զբաղեցված է [+բաղաձայն] հատույթով:

Հարկ է նշել, որ հայերենի վանկատման Վոքսի մոդելը՝ չնայած վիճելի «բարդ վանկավերջին» և վերջին բաղաձայնի կարգավիճակին (ատենախոսության մեջ վեր հանվող այս երկու խնդիրներն էլ հանգամանորեն քննվում են), այնուամենայնիվ, հստակ ու ճշգրիտ կերպով արտացոլում է ը-ի գործարկման մեխանիզմները: Երրորդ գլուխն ամփոփվում է որոշակի միջավայրերում (մասնավորապես՝ նախասկզբնական) ը-ի գետեղման անհամաչափությունների քննությամբ:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՀՈԳՆԱԿԻ ՉԵՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սույն ուսումնասիրության մեջ տեսականորեն հիմնավորված ու տրամաբանական է համարվում հայերենի CC բաղաձայնական կապակցությունները (խոսքը ձևույթների վերջահար դիրքերում թույլատրելի բաղաձայնախմբերի մասին է) դիտարկել որպես վանկավերջ-վանկասկիզբ հարաբերություններ: Այս խմբերն ընդհանուր առմամբ ենթարկվում են *հնչեղության* և *օրինականության* պահանջ-

ներին: Բայց, այնուամենայնիվ, որոշակի VCC] և VCCC] կապակցություններ առանձնահատուկ մոտեցում են պահանջում, քանի որ նման կառույցներում վերջադիր հատույթը երբեմն դրսևորում է հնչեղության առավել բարձր աստիճան, քան նախորդը, ինպես օրինակ՝ կարծր, կոճղ, մեղր, աստղ, եզր և այլ բառերում: Ըստ որոշ հնչույթաբանների¹⁵ CC կապակցություններում *հնչեղության սկզբունքը* խախտող բաղաձայնները զբաղեցնում են չափական սահմաններից դուրս դիրքեր, և, հետևաբար, դրանք համարվում են *հավելվածներ*: Վանկատման գործընթացներում հավելվածների առկայությունը որոշակի խնդիրներ է առաջացնում՝ պահանջելով ոչ ստանդարտ մոտեցումներ: Նման դեպքերում հաճախ կիրառվում է *հնչեղությունն արգելափակող պայմանը*, որը բավականին գործուն դեր է կատարում հայերենի վանկատման փուլերում:

Այս գլխում քննարկվում է *հավելվածների վարքագիծը* հոգնակի ընտրության մեխանիզմներում: Հայերենում արձանագրվում են արտաչափական տարրերի՝ հավելվածների *երեք* կարգեր՝ ա. պատմականորեն հոգնակիակերտ -ք ձևույթ (աչք, պարտք, կուրծք և այլն), բ. բառավերջի -ո, -ղ (եզր, մեղր, կոճղ, արկղ և այլն) և գ. բառավերջի -ս (հոգս, մաքս, կոքս, թուխս, փուքս և այլն): Վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ տարրերը մտային վանկահաշվարկի ժամանակ դեռևս «տեսանելի» չեն: Չափական կառուցվածքի մեջ հավելվածները ներգրավվում են միայն ածանցման հետագա փուլերում:

Ատենախոսության մեջ քննվում են նաև հոգնակի կազմության առանձնահատկությունները բաղադրյալ ձևույթներում, որոնք մտային բառարանի կարևոր մաս են կազմում և մտային բարդ կառույցներում պահվում են որպես որոշակի քերականական հատկանիշներ պարունակող «փաթեթներ»: Ասվածի վերաբերյալ լավ օրինակներ կարող են ծառայել հայերենում բաղադրյալ ձևույթների *վանկատման առանձնահատկությունները* կամ, ասենք՝ միավանկ ձևույթով վերջացող բարդությունների *հոգնակին կազմելու սկզբունքը*: Վերլուծության մեջ հատկապես ընդգծվում է այն փաստը, որ հայերենում հոգնակիակերտ ձևույթի վերջնական ընտ-

¹⁵ **Tranel, B.** (1995) Current issues in French Phonology: Liaison & Position Theories. In: *Handbook of Phonological Theory*, ed. **J. A. Goldsmith**. Blackwell publishers, 798-816; **Booij, G.** (1983) French C/Ø alternations, extrasyllabicity and lexical phonology. *The Linguistic Review* 3, 181-207; **Plénat, M.** (1987) On the structure of rime in Standard French. *Linguistics* 25, 867-887.

րության հարցում վճռական դեր ունեն շարահյուսական և *իմաստային-տրամաբանական բաղադրիչները*: Այսպես, թե ինչու, օրինակ՝ *նշանագիր* բարդությունը կարող է ստանալ թե՛ *-եր* և թե՛ *-ներ* հոգնակիակերտ վերջածանցը, մեկնաբանվում է բարդության մեջ բաղադրիչ անդամների միջև ոչ այնքան ձևաբանական-շարահյուսական (*կենտրոնախույս* կամ *կենտրոնամետ*) հարաբերություններով, որքան երկրորդ անդամի *իմաստային-տրամաբանական* կառուցվածքով: *Նշանագիր* հատույթը իմաստային մակարդակում կարող է հավասարապես ունենալ հետևյալ երկու իմաստները՝ *նշանների գիր* անվանական ձևույթ (հմմտ. սեպագիր, երկաթագիր, վերնագիր) և *նշաններով գրող* բայարմատ (հմմտ. մատենագիր, առակագիր, հեքիաթագիր): Միայն երկրորդ՝ *գիր* անդամի *իմաստային բաղադրիչի* տրամադրած տեղեկության հիման վրա է հնարավոր բաղադրյալ ձևույթի անդամների միջև համապատասխան շարահյուսական հարաբերություններ հաստատել և համապատասխան հոգնակիակետ ձևույթը կցել: Ընդհանրապես, բարդ ձևույթներում հոգնակի ձևերի ընտրությունը բավականին ընդգրկուն և բազմակողմանի վերլուծության կարիք ունի, քանի որ այստեղ հսկայական դեր ունեն բնիկ խոսողների կողմից որոշակի ձևույթների մտային՝ լեզվական-բնագոյային ու տրամաբանական մեկնաբանությունները: Նման վերլուծության մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի *իմաստային-տրամաբանական բաղադրիչը*:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՉԵՎՈՒՅՑ

ԻՍՍՍՏԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

ՅՈՂՏԱԿԻ ՉԵՎ

(ա) նշանագիր **(անվանական ձևույթ)** նշանագ(ի)րե՞ր



ՆՇԱՆԱԳԻՐ



(բ) նշանագիր **(բայական ձևույթ)** նշանագիրնե՞ր

ԳԼՈՒԽ 5. ՎՆԱԿԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆՐԱ ՄԱՍԻՆ

Հայերենի վանկաբաժանման մեխանիզմներում համընդհանուր քերականության կանոններից շեղումներ, ընդհանուր առմամբ, չեն արձանագրվում: Վերոհիշյալ մեխանիզմները պարզապես գործի են դնում լեզվին բնորոշ հատուկ պարամետրեր (որոնք ուսումնասիրված և հիմնավորված են ՀՔ տեսության կողմից)՝ առանց վանկային կառուցվածքի վրա գործող համընդհանուր սահմանափակումներում էական խախտումներ կատարելու:

Հայերենում վանկերի տրոհման և վանկատման հնչույթաբանական տեսության միջև հարաբերությունները գնահատելու, ինչպես նաև մարդկանց կողմից վանկերը սահմանազատելու և տեսական վանկաբաժանումը համեմատելու (երբեմն՝ նաև հակադրելու) նպատակով, սույն ուսումնասիրության մեջ ներկայացվում է լեզվաբանական երկու փորձ¹⁶: *Առաջին փորձի* հիմքում ընկած է դադար-ընդմիջում հրահանգը: Փորձի նպատակն էր պարզել, թե արդյո՞ք հայերենում որոշակի վանկային կադապարների տրոհումը համատեղելի է վանկատման տեսության մեխանիզմների հետ: Վերլուծության մեջ օրինակների բազմազանությունը ապահովելու նպատակով վերջիններս կազմվել են հայերենի բոլոր բաղաձայնատեսակներից և հնարավոր վանկատեսակներից: Օրինակները բաժանված են հինգ ենթախմբերի, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է որոշակի հնչյունային կադապար: *Երկրորդ փորձի* նպատակն էր ուսումնասիրել ուղղագրության դերը վանկաբաժանման առաջադրանքներում: Գրավոր հայերենը գրեթե նույնությամբ արտացոլում է արտասանությունը, ասել է թե՛ ուղղագրությունը հիմնականում համապատասխանում է հնչյունաբանական բառի իրականացման ընդհանուր պատկերացումներին: Սակայն գրություն-հնչյուն անկանոն հարաբերությունների երկու դեպք, այնուամենայնիվ, արժանի էր քննարկման: Դրանք էին՝ *Շհ (բաղաձայն+հ)* զուգորդությունները, որոնցում *հ* հատույթը հնչյունաբանորեն չի իրականացվում և որոշակի *CC (կրկնակ բաղաձայններ)* զուգորդություններ, որոնք ներկայանում են միջձայնավորական բաղաձայնի կրկնակի գրությամբ: Փորձի նպատակն էր պարզել, թե ինչպե՞ս և որքանո՞վ կարող է ուղղագրական գիտելիքը «միջամտել» գրավոր և բանավոր հատույթավորման բնագոյների: Ենթադրվում էր, որ օրինակները բանավոր ներկայացնելու դեպքում հատույթավորումը ավելի քիչ ազդեցություն կկրի ուղղագրական պայմանականություններից, քան գրավոր տեսքով ներկայացնելու դեպքում և, որ պատասխանների արդյունքները կախված կլինեն մասնակիցների *ուղղագրության իմացության* մակարդակից:

Հարկ է նշել, որ երկու առաջադրանքներում էլ՝ բանավոր և գրավոր, վանկաբա-

¹⁶ Փորձի օրինակները տրվում են ատենխոսության վերջում՝ զետեղված Ա և Բ հավելվածներում:

ժամանան մեխանիզմները համապատասխանում էին նախորդ գլուխներում քննարկված վանկատման ընդհանուր կանոններին ու սկզբունքներին:

Հինգերորդ գլխի երկրորդ մասը կազմում է հայերենի վրա հիմնված գաղտնալեզուն՝ «**ժուի լեզուն**», որի տեսական վերլուծությունը հիմնավոր վկայություն է տալիս հայերենի վանկերի ներքին աստիճանակարգական կառուցվածքի, վանկատման գործընթացում վանկային ենթաբաղադրիչների միջև որոշակի հարաբերությունների, ինչպես նաև լեզվի ռիթմային-չափական կառուցվածքի մասին: Գաղտնալեզվի «կանոնների» քննության մեջ, ընդհանուր առմամբ, արտացոլվում է այն իրողությունը, որ նույնիսկ անգրագետ, ոչ գրաճանաչ մարդիկ կարող են զարմանալիորեն լավ տիրապետել մայրենի լեզվի կառույցներին, հմտորեն բացեցնել վանկի բաղադրիչներն ու ենթաբաղադրիչները, ավելին՝ կիրառել վանկատման բարդ մեխանիզմներ, առանց երբևիցե գիտակցորեն տիրապետելու համապատասխան «կանոններին»¹⁷:

Ատենախոսության **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ** ամփոփված են հետևյալ կետերում.

1. Հայոց լեզվի ցանկացած քերականական մակարդակ հետևողականորեն ու արդյունավետ ուսումնասիրելու համար նպատակահարմար է *հայերենը դիտել համընդհանուր քերականության բազմալեզու համակարգի ընդհանրության մեջ*:

2. ՀՔ տեսության **ոչ գծային** սկզբունքներն ու մեթոդները գիտական ուսումնասիրության նոր հնարավորություններ են ընծեռում՝ տեսականորեն հիմնավորելու, բացատրելու աշխատանքում վեր հանված լեզվաբանական իրողությունները (հոգնակիի կազմություն, վանկատում/տողադարձ, գաղտնավանկային ը-ի զետեղում):

3. Ոչ գծային տեսության շրջանակներում հնարավոր է նաև ցույց տալ, որ հայերենում (ինչպես աշխարհի շատ լեզուներում) **վանկերը կարող են գոյություն ունենալ բառերից անկախ**.

4. Հայերենում վանկատման մեխանիզմները, ընդհանուր առմամբ, գործում են

¹⁷ Տե՛ս **Denham, K.** (2005) Ludlings Teach Language Diversity and Change: From Pig Latin to Ubbly Dubby. National Council of Teachers of English (NCTE) 2005, March 6, Annual Meeting. Pittsburgh, PA.

համընդհանուր քերականության վանկաբաժանման ալգորիթմի տիրույթում:

Վանկատման *համալեզվական ալգորիթմում* որոշակի փոփոխություններ կամ, ավելի հստակ՝ հավելյալ գործողություններ ներմուծելով համդերձ, հայերենին բնորոշ վանկատման մեխանիզմներն, այնուամենայնիվ, ներդաշնակորեն տեղավորվում են **7** համապատասխան կանոնների ու սկզբունքների սահմաններում:

5. Սույն ուսումնասիրության շրջանակներում կատարված փորձերի արդյունքները հաստատեցին, որ, չնայած արձանագրված՝ էապես պարամետրային և տեսական առումով անշան տարբերություններին՝ հայերենում վանկային հատույթավորման գործընթացները լիովին համապատասխանում են **3** վանկի տեսության կանխատեսումներին:

6. Վանկի ենթաբաղադրիչների ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ գաղտնալեզվի/լեզվախաղի հնչույթաբանական վերլուծությունը հայերենի համար ևս հետաքրքիր ու յուրահատուկ միջոց է հաղորդակից լինելու բնիկ խոսողների լեզվական բնագոյներին, գաղտնալեզվով խոսողների «անգիտակցական տեղյակությանը» ընկալման գործընթացներին ու այդ գիտելիքը հմտորեն կիրառելու նրանց բացառիկ կարողություններին: «Ծտի լեզվի» չափական արտաբերության մեջ նկատելիորեն ընդգծվում են հայերենին բնորոշ բառային շեշտն ու յամբական ոտքի կառուցվածքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. “Some Remarks on English Rhythm and its Teaching to Armenian Students”. SEMIOTICS and LANGUAGE TEACHING, Theoretical Principles and Practical Applications, Caravan Books, Ann Arbor 2001, pp. 209-214.
2. «Ը հնչյունի կարգավիճակը ժամանակակից հայերենում», ԲԱՆԲԵՐ ԵՐԼԱՆԻ համալսարանի, հաս. գիտ., 134.2, Եր. 2011, էջ 58-70:
3. “Speech Disguise (Bird Talk) and its Role in Phonological Analyses”. ARMENIAN FOLIA ANGLISTIKA, International Journal of English Studies, 1-2(6)/ 2009-Yerevan, Yerevan 2011, pp. 41-48.
4. «Գաղտնալեզուն (ծտի լեզուն) ու նրա դերը հնչույթաբանական վերլուծության մեջ», ԿՍԽԹԵՐ, Գիտ. հոդվածներ, 3 (48), «Ասողիկ» հրատ., Եր. 2011, էջ 42-50:
5. “The Status of Schwa / Ը in Modern Armenian”. LANGUAGE, LITERATURE and ART in CROSS-CULTURAL CONTEXTS, ABSTRACTS, Third International Conference, 4-8 October, Yerevan 2011, p. 77.

Оганесян Асмик Размиковна

Слог – как компонент фонологического анализа

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – „Общее и прикладное языкознание”

Защита состоится 23 апреля 2012 г., в 14⁰⁰, на заседании специализированного совета ВАК 019, действующего при Институте языковедения, им. Р. Ачаряна, НАН РА.
Адрес: 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Рецензируемая диссертация изучает роль слога в фонологическом исследовании, а также факты слогоделения в современном армянском языке. Детальный (*автосегментный*, т.е. не линейный/многолинейный) анализ, сосредоточенный в частности на поведении согласных и консонантных групп на границах морфем и обусловленных этим поведением фонологических процессов, указывает на важность слогового анализа в армянском языке. Особо подчеркивается роль, которую в лингвистических процессах играет слог - как часть просодической иерархии. Слоги имеют исключительную роль в фонологическом осведомлении, в умственной обработке речи и в чтении. Лингвистические факты, обсуждаемые в данной работе, еще более подчеркивают важность *слогоценричного* подхода в фонологических и психолингвистических исследованиях. В армянском языке существует ряд морфологических-фонологических правил, которые весьма чувствительны к слоговому строю. Например, в процессе *аспирации* усиленные начальные согласные слога (и в медиальных, и в финальных контекстах) выполняют функцию маркирования границ, сигнализирования границ слогов и морфем. Правило *отбора морфем множественного числа* основано на слогосложении/слоговом счете языка. Правила *эпентезы* соотносятся не только с фонотактикой языка, но и с внутренним строением слога и стратегией слогоделения. В основе данной работы лежит принципиальное утверждение о том, что **слог -как компонент фонологического анализа- существует независимо от слова и, что определенные лингвистические явления и процессы более эффективно рассматриваются в области слога.**

Первая глава начинается кратким обзором генеративной лингвистики –как части когнитивной науки и относящихся к данной работе современных теоретических подходов

и исследований, выделяя особое внимание на важность слога в фонологическом анализе. Данная работа предполагает, что наиболее эффективным и надежным методом лингвистического исследования армянского языка является автосегментный/не линейный анализ.

Во **второй главе** обсуждается слоговая структура армянского языка. О внутреннем иерархическом строе слога свидетельствуют такие известные лингвистические процессы как дистрибутивный характер фонологических/фонетических сегментов в начальных, медиальных и финальных позициях, распределение ударения, ларингальная ассимиляция, и т. д. Предлагаемая в данной работе слоговая модель в армянском языке имеет следующее строение:

$$[X_0^1]_{\text{onset}} [x^1]_{\text{nucleus}} [X_0^1]_{\text{coda}}$$

В последующих двух главах (**третьей и четвертой**) фонологические/морфологические признаки слога рассматриваются в отношении двух хорошо изученных фактов в фонологической грамматике армянского: отбора суффиксов множественного числа и механизмов эпентезы. Исследования показали, что носители языка манипулируют именно теми абстрактными конструкциями, которые лежат в основе *характерных для армянского слога* форм.

В **пятой главе** проводятся параллели между фактами армянского слогоделения и упреждениями универсальной грамматики, сравнивая принципы теоретического слогоделения и результаты, полученные в итоге экспериментов человеческого слогоделения.

Тщательный анализ криптоязыка – „Птичьего говора” показал, как носители языка, несмотря на возраст и уровень образования (со значительным числом неграмотных среди них), манипулируют фонологией родного языка не имея элементарного знания грамматических правил.

Диссертация состоит из введения, пяти глав, заключения, двух приложений, словаря и библиографии.

Hasmik Hovhannisyan

The Syllable as a Component of Phonological Analysis

A dissertation submitted in fulfilment of the requirements for the Candidate of Sciences in Linguistics (*General and Applied Linguistics*, specialization no. 10.02.02).

Date of the defence: April 23, 2012, at 2 p.m., at the meeting of the Academic Council 019 at H. Acharyan Institute of Linguistics, National Academy of Sciences, RA.

Address: 15, Grigor Lusavorich Street, Yerevan, 0015, RA.

SUMMARY

The present study is on the role of the syllable in phonological analysis and syllabification facts in Modern Armenian. A close (*autosegmental*, *i.e.* non-linear/multi-linear) analysis centred particularly on the behaviour of consonants and CC clusters at morpheme edges, as well as the phonological processes conditioned by that behaviour, testifies to the importance of the syllable in Armenian and the role it plays in linguistic processes as part of prosodic hierarchy. Syllables play an important role in phonological awareness, speech processing and reading. The facts discussed in this study add more evidence to the relevance of the *syllable-based* phonological and psycholinguistic approaches. Armenian employs certain mechanisms to elegantly manipulate between the universal and language-specific syllabification rules and principles. In general, Armenian syllabification facts are driven by the algorithm proposed for Universal Grammar. In addition, Armenian has a set of morpho-phonological rules that are quite sensitive to syllable structure. Thus, for instance, in the process of *aspiration* enhanced syllable onsets (in medial and final contexts) perform an edge-marking function, signalling syllable-edges and morpheme boundaries; the *plural selection rule* relies on the syllable (syllable count) of the language; the *rules of epenthesis* are correlated not only with the phonotactics of the language but also the syllable internal structure and syllabification strategies. The present study considers the syllable as a most appropriate (independent) domain for certain linguistic analysis in Armenian.

Chapter 1 introduces a brief overview of generative linguistics as part of cognitive science and modern theoretical approaches and analyses relevant to the present study, with special emphasis on the significance of the syllable in modern phonological analyses. It is

assumed in this chapter that the most effective and reliable method of linguistic study of Armenian (among other languages) is the autosegmental/non-linear analysis.

In **Chapter 2** the syllable structure of Armenian is discussed. The syllable in Armenian, like in many other languages, has internal hierarchical structure. This assumption can be supported by the character of a number of well-known linguistic processes: the distributional behaviour of phonological/phonetic segments (or segment clusters) in syllable-initial, -medial and -final positions, stress assignment, laryngeal assimilation, fortition, etc., which may be accounted for only by reference to the syllabic structure, its immediate constituents and sub-constituents. The syllable template in Armenian – as suggested in this analysis – has the following pattern:

$$[X_0^1]_{\text{onset}} [x^1]_{\text{nucleus}} [X_0^1]_{\text{coda}}$$

In **Chapters 3** and **4** the phonological/morphological evidence for syllables is analysed with reference to two well-attested phenomena in Armenian phonological grammars: the plural selection rule and epenthesis strategies. The analyses show that the native speakers manipulate the abstract frames of underlying forms corresponding to the Armenian-specific well-formed syllable. So my hypothesis is that the encoded phonological knowledge about the abstract frames of syllable structure guides the plural selection of the native speakers of Armenian. All the necessary phonological and phonetic adjustments in the syllable structure (vowel deletion, Hiatus Constraint, Sonority and Legality requirements, etc.) are considered at later stages of syllabification. Another of the later applied processes is the epenthesis which is activated to fix impermissible CC clusters.

In **Chapter 5** I draw parallels between language-specific segmentation facts and the Universal Grammar predictions, comparing the principles of theoretical syllabification and the results obtained from the experiments of human syllabification. A close study of a speech disguise (Bird Talk) reveals a striking evidence of how people – regardless of the age and level of education (with a considerable number of illiterates among them) – manipulate the phonology of the native language without even having elementary knowledge of grammar rules.

The paper consists of an **Introduction, Chapters 1-5, Conclusions, Appendices, a Glossary and References.**